



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԻՂՐՈՑԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ  
ՏՆՕՐԵՆ

« 03 » 05 2021թ.

№ 08/ԼԱ/ - 273

2021թ. ապրիլի 26-ից մայիսի 2-ը դիտված հիդրոոդերևութաբանական  
պայմանները ՀՀ-ում

Ապրիլի 26-ից մայիսի 2-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Գորիսում՝ 76մմ, Իջևանում և Պուշկինի լեռնանցքում՝ 41մմ, Ջերմուկում՝ 37մմ, Սիսիանում, Կապանում, Տաշիրում՝ 33-34մմ, Բազրատաշենում՝ 31մմ, Աշոցքում՝ 29մմ, Ուրցաձոր՝ 27մմ, Ճամբարակում և Անանուն լեռնանցքում՝ 26մմ, մնացած շրջաններում կազմել է 4-24 մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը ապրիլի 26-29-ին նորմայից բարձր է 3-6, մայիսի 1-2-ին՝ 1-3 (Սյունիքում մայիսի 2-ին նորմայից ցածր՝ 1-2) աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է Արարատյան դաշտում +28...+29°C, Սյունիքի հովիտներում՝ +24...+29°C, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի նախալեռներում՝ +24...+28°C, Տավուշում, Լոռիում՝ +20...+24°C, Սյունիքի նախալեռներում՝ +18...+22°C, Շիրակում, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ +18...+23°C (Աշոցքում՝ 17°C), Գեղարքունիքում, Արագածոտնի լեռներում՝ +15...+20 աստիճան տաքություն:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է Շիրակում, Լոռիում, Արագածոտնի լեռներում, Գեղարքունիքում, Կոտայքի, և Վայոց Ձորի լեռներում +3...+8°C (Աշոցքում, Ծաղկահովիտում՝ 2°C), Սյունիքի նախալեռներում՝ +5...+8°C, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի նախալեռներում՝ +7...+10°C, Տավուշում՝ +8...+11, Սյունիքի հովիտներում 11-13°C, Արարատյան դաշտում՝ +9...+12 աստիճան:

Ապրիլի 27-ին Աշտարակում դիտվել է կարկուտ 4մմ, 28-ին Դիլիջանում և Ջերմուկում՝ 8մմ, Ֆանտանում՝ 12մմ, ապրիլի 30-ին՝ Վանաձորում դիտվել է կարկուտ 0.4մմ տրամագծով: Առանձին օրեր առանձին շրջաններում դիտվել է քամի՝ 8-16մ/վրկ, պողոթյունները՝ մինչև 16-21մ/վրկ արագությամբ:

Մայիսի 3-ի դրությամբ ձյան ծածկը պահպանվում է 2500մ-ից բարձր շրջաններում:

Շաբաթվա ընթացքում շարունակվել է գյուղատնտեսական մշակաբույսերի աճն ու զարգացումը, եղանակային պայմաններն այնքան էլ նպաստավոր չեն եղել դաշտային աշխատանքներ իրականացնելու համար, ժամանակ առ ժամանակ դիտվել են տեղումներ:

Լեռնային և որոշ նախալեռնային շրջաններում աշնանացան ցորենը գտնվել է ցողունակալման փուլում: Ծաղկահովիտում գարնանացան գարու հատիկը կտցել է, Գյումրիում առաջացել է երրորդ տերևը, Շորժայում և Տաշիրում կատարվել է կարսոֆիլի ցանքը:

Հովտային շրջաններում շարունակվել է պտղատուների պտուղների ձևավորումը, Արարատում առաջացել է աշնանացան ցորենի ծեղացողունի ներքին հանգույցները, խաղողի վազի՝ ծաղկաբույլերը: Արտաշատում կատարվել է ջերմասեր մշակավույսերի դաշտերի փխրեցում, Մերձավանում՝ առվույտի ոռոգում:

Ապրիլի 26-30-ին հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել, մայիսի 1-ի երեկոյան և 2-ի առավոտյան հանրապետության հյուսիսային և հյուսիս-արևելյան շրջանների գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում, մնացած շրջանների գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 3սմ-ով և կազմել՝ 1900.75մ (02.05.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 15 սմ-ով:

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

 L. Ազիզյան